ՀՏԴ 005.41:338.45(479.25)

Լ.Հ. ԱՂԱՋԱՆՅԱՆ, Լ.Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Լ.Լ. ԱՂԱՋԱՆՅԱՆ,
Ա.Լ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Դիտարկվում են արդյունաբերության կարևորությունը և առաջնահերթությունը երկրի տնտեսական զարգացման գործընթացներում: Քննարկվում և հիմնավորվում են Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերության կայուն ու համալիր զարգացմանը նպաստող հիմնական ուղղություններն ու միջոցառումները:

Առանցքային բառեր. արդյունաբերություն, զարգացում, առաջնահերթություն, ռեսուրսներ, տնտեսական ցուցանիշներ, ժամանակակից տեխնոլոգիաներ:

Պատմական որոշակի ժամանակաշրջանում բարձր աճ են ապահովել այն երկրները, որոնք, ունենալով մեծ բնակչություն և հսկայական տարածքներ, կարողացել են միջազգային առևտրային կապերի ընդլայնման միջոցով ապահովել արհեստագործության բարձր մակարդակ և արտադրել ապրանքների ու ծառայությունների բազմապիսի տեսակներ: Միաժամանակ, ռեսուրսների մեծ քանակության հետ միասին, տնտեսական բարձր զարգացում ապահովելու համար կարևոր նշանակություն է ունեցել նաև արտադրության կազմակերպված բնույթը, արտադրողական ուժերի և առաջադեմ տեխնոլոգիաների առկայությունը:

Հասարակության տնտեսական զարգացման գործընթացները ցույց են տալիս, որ տնտեսության ցանկացած ոլորտի ծավալների մեծացումն ու ընդլայնումը պայմանավորել է արտադրողական ուժերի նկատելի զարգացում: Այն կարող է արտահայտվել արդյունահանվող հանքահումքային ռեսուրսների բազմազանությամբ ու զգալի աճով, մարդկանց համար օգտակար մետաղյա տարբեր գործիքների ու իրերի արտադրությամբ, ռազմական տեխնիկայի կատարելագործմամբ, արտադրվող ապրանքների որակական հատկանիշների բարելավմամբ: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ արդյունաբերական արտադրության զարգացումը, որպես կանոն, իր հերթին պայմանավորել և այսօր էլ պայմանավորում է տնտեսության մյուս ճյուղերի ընդլայնումը, բազմազանեցումը և ներքին ու արտաքին առևտրային կապերի մեծացումը: Այսօրվա տնտեսական կյանքն իր ժամանակակից տեխնոլոգիաներով, վառ արտահայտվող շուկայական հարաբերություններով, տնտեսական ինտեգրման ու միջազգային առևտրի զարգացման խիստ բարձր մակարդակով առավել հիմնավորում և ընդգծում է արդյունաբերության կարևորությունն ու առաջնահերթությունը ցանկացած երկրի տնտեսությունում:

Ժամանակակից աշխարհում գիտության ու տեխնոլոգիայի արագ զարգացումը, տնտեսական ինտեգրման և առևտրային կապերի աննախադեպ ընդլայնման գործընթացները փոխել և փոխում են պետությունների տնտեսական զարգացման գործող օրինաչափությունները: Տնտեսական աշխարհում ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, երբ շահեկան դիրքում են հայտնվում այն երկրները, որոնք իրենց ունեցած էներգետիկ և հանքահումքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը զուգակցում են ազատ մրցակցային շուկայական հարաբերությունների, տարածաշրջանային առավելությունների, գիտական և կրթական ներուժի զարգացման, ժամանակակից տեխնոլոգիաների մեծ չափով ընդլայնման հնարավորությունների հետ:

Տնտեսական բարեփոխումների համար հիմք են հանդիսացել տնտեսության բոլոր ճյուղերում հետևյալ հիմնական միջոցառումների համալիր իրականացումը.

1. Ազատ մրցակցային շուկայական հարաբերությունների մեծածավալ կիրառումը, պայքարը տնտեսական և իրավական ոլորտներում մենաշնորհային ցանկացած դրսևորման դեմ: Այսպես, ճապոնական հրաշքի ամենաառաջին միջոցառումներից էր այն, որ արդյունաբերությունում խիստ պայքար սկսվեց շուկայական մրցակցությունը սահմանափակող, մենատիրական և օլիգոպոլիստական կառույցների դեմ [1]:

2. Գների ազատականացման գործընթացները, որպես կանոն, անմիջապես զուգակցվում են ապրանքների ու ծառայությունների գների արհեստական բարձրացման ցանկացած դրսևորման դեմ՝ պետության կողմից իրականացվող խիստ միջոցառումներով: Այս տեսակետից բնութագրական է նշել տնտեսական բարեփոխումը Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, որտեղ ընդունվեց առանձին օրենք գների արհեստական բարձրացման դեմ [2]:

3. Արդյունաբերության բոլոր ճյուղերի ու ենթաճյուղերի (հատկապես այն ճյուղերի ու ենթաճյուղերի, որոնք բնութագրական են եղել տվյալ տնտեսության համար, և որտեղ երկիրն ունի անհրաժեշտ բնական, աշխատանքային ու մարդկային ռեսուրսներ) արագ զարգացմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրագործումը:

4. Ներմուծման ծավալների կրճատմանը (հատկապես, այն ապրանքների ու ծառայությունների, որոնց արտադրությունը հնարավոր է երկրի ներսում) և արտահանման ծավալների ավելացմանն ուղղված պետական հստակ քաղաքականության կենսագործումը:

5. Բարձր մրցակցային շուկայական մեխանիզմին զուգընթաց՝ տնտեսության վճռորոշ ոլորտներում հատուկ դեր սկսեց կատարել պետությունը: Այս գործոնը հատկապես ակնառու դրսևորվեց Ճապոնիայում, որտեղ տնտեսության վերակառուցումը,մասնավորապես՝ արդյունաբերության ճյուղային կառուցվածքի ձևավորումը, տեղի էր ունենում կառավարության ակտիվ մասնակցությամբ և ուղղակի վերահսկողությամբ [3]:

6. Փոքր և միջին ձեռնարկատիրության արագ ընդլայնումը:

7. Գիտատեխնիկական նվաճումների մեծ չափով օգտագործումը տնտեսությունում:

Նշված հիմնախնդիրները այժմեական են նաև Հայաստանի Հանրապետության տնտեսությունում: Մեր երկիրը խնդիր է դրել տնտեսական բարձր աճ ապահովել տնտեսության բոլոր ճյուղերում ու տարածաշրջանում, ընդ որում, կարևորելով ու առանձնացնելով տնտեսության այն գերակա ճյուղերը, որոնք պետք է առաջին հերթին առաջանցիկ աճ ապահովեն և որոնք կարող են արագ աշխուժացնել տնտեսության մյուս ճյուղերի գործունեությունը:

1990-ական թվականների սկզբներին Հայաստանում վարչահրամայական համակարգի փլուզմամբ և շուկայական հարաբերությունների արագ ձևավորմամբ պայմանավորված կառուցվածքային խոշոր փոփոխությունները հանգեցրին արդյունաբերական ձեռնարկությունների գերակշիռ մասի գործունեության դադարեցմանը և տնտեսության հիմնարար ոլորտը հանդիսացող արդյունաբերության դերի աստիճանական նվազմանը: 2015թ. Տվյալներով՝ ՀՀ-ում արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմում է միայն 16,2, չնայած պետք է նշել, որ որոշակի չափով աճել է արդյունաբերական կազմակերպությունների քանակը՝ 2012թ.-ի 2587 միավորից 2015թ.-ին հասնելով 2802 միավորի [4]:

Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում, որպես մեր երկրիտնտեսության առաջընթացի և հետագա աճի կարևորագույն գերակա ուղղություններ, դիտարկվում են արդյունաբերությունը և արտահանման խրախուսումը, փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծման և գործունեության ապահովումը: Կարևոր է ընդգծել, որ նշված ծրագրում որպես Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժ ընդունվեց արտահանումը, դրա առաջանցիկ աճը, արդյունաբերության դերի ու նշանակության կտրուկ մեծացումը [5]:

2017թ. հունիսին ընդունված և մեր երկրի տնտեսության զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022թթ. Ծրագ-

րում նշվում են կարևոր երկու նպատակադրումներ: Առաջին, զարգացած երկրների համեմատ տնտեսական աճի առաջանցիկ տեմպերի ապահովում՝ համախառն ներքին արդյունքի միջին հաշվով շուրջ 5 տոկոս աճի ապահովման միջոցով: Երկրորդ, արտահանման աճի նշանակալի տեմպերի ապահովում՝ ապրանքների և ծառայությունների արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ում հասցնելով 40-50 տոկոսի [6]:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման 2017-2022թթ. պլանի շրջանակներում, մեր կարծիքով, անհրաժեշտ է, առաջին հերթին, հիմնական ուշադրությունը դարձնել հետևյալ համալիր միջոցառումների կենսագործմանը.

1. Տնտեսության վերակառուցման, մասնավորապես՝ արդյունաբերության ճյուղային կառուցվածքի ձևավորման ու փոփոխման գործընթացները պետք է տեղի ունենան կառավարության ակտիվ մասնակցությամբ ու վերահսկողությամբ: Ելնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության 2017-2022թթ. զարգացման ծրագրից՝ անհրաժեշտ է պարբերաբար մշակել և իրականացնել տնտեսական կայունության ապահովման, լոգիստիկական մոտեցումների ներդրման, գերակա ճյուղերի աշխուժացմանն ուղղված կոնկրետ միջոցառումներ (ընդ որում, նախ և առաջ, արդյունաբերության ճյուղերի ու ենթաճյուղերի համար):

2. Առաջին կետում նշված միջոցառումները պետք է որոշակիացվեն՝ ելնելով տարածաշրջանային զարգացման առանձնահատկություններից, հաշվի առնելով տվյալ տարածքում սոցիալական գործոնները (աղքատության և գործազրկության մակարդակը), ձեռնարկատիրությամբ զբաղվելու աստիճանը, ձեռնարկությունների թիվը, աշխատանքային և հանքահումքային ռեսուրսների առկայությունն ու դրանց օգտագործման աստիճանը:

3. Ներմուծվող արտադրատեսակները Հայաստանում արտադրելու դեպքում կիրառել հարկային զգալի արտոնություններ, ընդհուպ մինչև 2-ից 3 տարի հարկերից դրանց լրիվ ազատումը (հատկապես, սահմանամերձ շրջաններում):

4. Աշխատանքներ իրականացնել ՀՀ տնտեսության մեջ արտադրվող հիմնական արտադրատեսակների, ինչպես նաև տարբեր ոլորտներում մատուցվող ծառայությունների մրցունակության գնահատման (և դրանք միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու) ուղղությամբ:

5. Անհրաժեշտ է խստացնել միջոցառումների համակարգը գների արհեստական բարձրացման դեմ:

6. Հայաստանի Հանրապետության ունեցած արտաքին պետական պարտքի նկատելի չափերը և արտասահմանյան ներդրումների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը պահանջում են, որ առավել խրախուսվի ժամանակակից բարձր տեխնոլոգիաների ներմուծումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Տնտեսական պատմություն. հարցեր և պատասխաններ: Ուսումնական ձեռնարկ /Մ.Ռ. Եղիազարյան, Լ.Հ. Խաչատրյան, Ա.Ռ. Մարտիրոսյան, Ա.Հ. Հակոբջանյան, Ա.Պ. Խանդամիրյան.- Երևան: ԵՊՀ, 2011.- 163 էջ:
2. **Бор М.З.** История мировой экономики: Конспект лекций.- М.: Экономика, 1998.- 208 с.
3. **Անանյան Լ., Պետրոսյան Լ.** Տնտեսական պատմություն. Ուսումնական ձեռնարկ.- Երևան: Տնտեսագետ, 2005. - 219 էջ:
4. www.armstat.am/file/doc/99501038.pdf
5. Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, www.gov.am/files/docs/1322
6. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր 2017-2022 թթ., www.arlis.am/banners/HH_Kar_cragir.pdf

Л.Г. АГАДЖАНЯН, Л.Г. ХАЧАТРЯН, Л.Л. АГАДЖАНЯН, А.Л. АГАДЖАНЯН

ПРИОРИТЕТЫ РАЗВИТИЯ ПРОМЫШЛЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Рассматриваются важность и приоритеты промышленности в процессах экономического развития страны. Обсуждаются и обосновываются основные направления и мероприятия, которые могут способствовать устойчивому и комплексному развитию промышленности в Республике Армения.

Ключевые слова: промышленность, развитие, приоритет, ресурсы, экономические показатели, современные технологии.

L.H. AGHAJANYAN, L.H. KHACHATRYAN, L.L. AGHAJANYAN, A.L. AGHAJANYAN

PRIORITIES OF INDUSTRY DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

The importance and priority of industry in the country economic development are considered. The basic directions and activities that can contribute to the sustainable and integrated development of industry in the Republic of Armenia are discussed and substantiated.

Keywords: industry, development, priority, resources, economic indicators, modern technologies.

ՀՏԴ 334.012.3

Ա.Ս. ՄԱԴՈՅԱՆ, Ա.Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

«ԱՐԴՎԻՆ» ԲԲԸ-Ի ԱՐՏԱԴՐԱԾ ՍԻՆՔՐՈՆ ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺԻՉՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ ՀՀ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Վանաձոր)

Ներկայացված է «Արդվին» ԲԲԸ-ում արտադրված սինքրոն էլեկտրոշարժիչների պահանջարկի հետազոտումը ՀՀ ջերմոցային տնտեսություններում, որոնք նախատեսված են օդափոխության համակարգում օգտագործելու համար: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Արդվին» ԲԲԸ-ի արտադրանքը պահանջված է Հայաստանի շուկայում, և առաջարկվել են ուղիներ շուկա մուտք գործելու համար:

Առանցքային բառեր. սինքրոն էլեկտրաշարժիչ, ջերմոց, շուկայի ուսումնասիրություն, 7P մոդել, պահանջարկ, գին:

Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկության տնտեսական գործունեության բարենպաստ իրականացման գրավականներից է գրագետ մարքեթինգային քաղաքականության վարումը, որի բաղկացուցիչ մասերն են ապրանքային քաղաքականության մշակումն ու իրացման արդյունավետ կազմակերպումը, ինչպես նաև շուկայական մրցակցության պայմաններին ճկուն հարմարվողականությունը [1]:

Նշված նպատակներն իրականացնելու համար դիտարկել ենք Արմավիրի մարզի ջերմոցային տնտեսությունները և փորձել ենք կատարել «Արդվին» ԲԲԸ-ում արտադրված էլեկտրաշարժիչների մարքեթինգային հետազոտություն: